

որ հասարակօրէն ստում են, 100 մաս օղի մէջ 21 մասը թթուածին է՝ 79ը ազոտ։ Բայց եթէ կշիռով ուղինանք իմանալ, այդ ժամանակ հարկւր մաս օղի մէջ 23ը կը լինի թթուածին, իսկ 77 ազոտ։ Բացի սորանից՝ օղի մէջ էլի զանազան գազեր կան խառնուած, օրինակ՝ ածխածին, ջրային շոգիներ և այլ գազեր, որոնք բաժանվում են այրման ժամանակ, մինչև անգամ ամուր մարմիններ էլ կան օղի մէջ, ինչպէս են զանազան փոշիները։ Բայց այդ խառնուրդները այնքան աննշան քանակութեամբ են, որ համարեալ թէ նկատելի չեն։ Աւելի յիշուած, ուսումնականները սկսել են քննել օղը երկրի զանազան կողմերում, սարերի և դաշտերի վերայ, ամենայն տեղ թթուածնի և ազոտի պարունակութիւնները միաջամբ են գտել։

Բայց ինչո՞ւ համար մթնոլորտի օղի մէջ թթուածինը խառնուած է ազոտի հետ, և այն էլ այնպէս, որ թթուածինը առաւել սակաւ է քան թէ ազոտը։ Այն է որ օղը միայն թթուածնից լինէր բաղկացած, այդ ժամանակ ամեն մէկ բոց անշիջանելի հրդեհ կը դառնար։ Չուտ թթուածնի մէջ ձգած կենդանին սկզբումը իրան լաւ է զգում, բայց յետոյ թոքերի բորբոքումն է յառաջ գալիս, և այդ ժամանակը արիւնը անսովոր կարմրութիւն է ստանում։ Ազոտը ահա նորա համար է՝ որ մեղմացնի թթուածնի սաստիկ ներգործութիւնը։

Ո՞ր են գնում հապա օղի մէջ եղած միւս զանազան խառնուրդները։ Բոլոր այդ խառնուրդները հաւաքուելով մթնոլորտի մէջ, կարող էին բոլորովին ապականել

օղը, բայց ջրային շոգիները անձրևի ձևով տեղալու ժամանակ տանում են իրանց հետ այդ խառնուրդները և ձգում երկրի վերայ, և այդպէսով մաքրում են օղը։ Բացի այս՝ բոյսերին անհրաժեշտ հարկաւոր է ածխածին, որին նոքա իրանց տերեւների միջնորդութեամբ կուլ են տալիս օղի միջից և փոխարկում իրանց համար մարմին, իսկ արեգակի ճառագայթների ազդեցութեամբ նոքա արտաշնչում են թթուածին։ Ածխածինով լիքը շիջի մէջ եթէ դնենք մի տերեւից ծիւղ և յետոյ դնենք արեգակի տակը, մի առժամանակից յետոյ ածխածին կը անհետանայ և շիջի մէջ կերևայ թթուածին։

ՂԱԶԱՐ ԱՂԱՅԱՆՅ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՅ ԱԶԳԻ Ի ՀԱՒԱՏՍ ԵՒ Ի ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ.

Աշխարհքիս երեսին ինչպէս ամեն ազգ, նոյնպէս և մեր Ազգը ունեցել է ազգային յատկութիւններ, ունէր և ազգային պաշտօնութիւն, ազգային յատկութիւնով իւր քրիստոնէական հաւատքին մէջ ամեն ազգերէն յառաջ փայլեցաւ, և ազգային գրականութեամբ եկեղեցական դպրութեան մէջ յառաջադիմութիւն գործեց, ու իր քրիստոնէական եկեղեցիքը անխախտելի պահելով ի դրանց դժոխոց՝ իր ազգութիւնն էլ հաստատուն պահեց. մէկի մէջ իրեն յատկացեալ աստուածապաշտութեամբ, միւսի մէջ իր ուսումնասիրութեամբ, մէկովը իր առ Աս-

առւած պարտքը կատարեց, միւսովը առ իւր ազգութիւնը ունեցած պարտքը:

Ահ, այն ինչ ժամանակ էր երջանկութիւն չայ ազգին. մինչդեռ աշխարհք ամենայն կռապաշտութեան ալեաց մէջը կը ծփար, մինչ դեռ աշխարհքին ազգերը կը ռապաշտութեան մէջ կ'սորդային, չայոց ազգը, չայոց ազգը միայն իւր ազգային յատկութեամբը — աստուածաշնորհութեամբ քրիստոնէութեան լոյսը աշխարհք ծագած ժամանակին, ամենէն յառաջ գրկեց Քրիստոսի սուրբ Աւետարանը իւր նախապիկայ Երգար անդրանիկ թագաւորի ձեռքով:

Այն ի՞նչ ժամանակ էր դարձեալ չայ ազգին, երբ երկրորդ անգամ կռապաշտութիւնը իւր բռնաւոր բազուկը չայաստանի միջնորոտի վրայ բարձրացնելով, նորատունկ քրիստոնէութիւնը գիւղերէն, քաղաքներէն խլելով, լեռները և ձորերը սփռեց: Արկրորդ անգամ ևս չայ ազգը իւր հայկական յատկութեամբ փութացաւ, դարձաւ իւր նախընկալ քրիստոնէութեան գիրքը. իւր հաւատոյ երկրորդ լուսաւորչի առաջնորդութեամբ՝ բռնութիւնը բռնութեամբ վարեց. որով և չայաստանի քառածագ ոլորտքը իմանալի արեւական լուսովը փայլեցաւ. կռապաշտութեան խաւարը անդարձ փառատեցաւ մարդկային սրտի խորշերէն անգամ, ուր որ քրիստոնէական հաւատքը տարրանալով, իր փրկարար լոյսն էր ծառայութիւն:

Ինչ որ չայոց ազգի ուսումնասիրութեան ոգւոյն վրայ էլ աչք դարձնենք, որ նոյնպէս սեպհական յատկութիւն է նորան, գերագանց քան զառաջինն կոստ-

նենք. նոյն մատաղ մանկունքը սրբոյն Սահակայ և Մեծրովբայ հայկական դպրոցէն ուսման ճաշակը առած, մեր եկեղեցական դպրութեան, մեր ազգային դրականութեան կարօտութիւնը զգացին երբ որ դեռ Յունաց և Եսորեոց լեզուով չայկական աստուածաշնորհութիւնը կը կատարուէր. չայաստանեացի եկեղեցւոյ պաշտամունքը Յոյն և Եսորի լեզուաց կապաստանէր, այն ժամանակ չայոց արեւելեան եկեղեցւոյ զաւակները արեւմուտք վազեցին, էլ սար ու ձոր չկար որ նոցա ճանապարհը փակէր. ծով ու ցամաք չափեցին. Մեծրովբեան նշանադրով Եստուածաշունչը և եկեղեցական դրեանք թարգմանած բերին. եկեղեցական դպրութիւնը ծագեցրին. մուրացածոյ լեզուները եկեղեցւոյ դռներէն դուրս հանեցին. ազգային դրականութեան, ազգի կրօնական զարգացմանը նոր լուսաւորիչք հանդիսացան, դպրոցք և դիւանք ազգային լեզուով դրաւոր ճոխութիւնն արդիւնաւորեցին:

Իայց անանկը ո՞յք և ո՞յք էին չայոց ազգի այս կրօնական լուսաւորութեան և զրաւոր զարգացման ազգի դարաւոր յառաջադիմութեան շարժառիթք. սրբոյն Թադդէոսի քարոզութեամբը չայաստան դարձաւ ի քրիստոնէութիւն. բայց անդրանիկ թագաւորի ոյժը և կարողութիւնն էր, որ միանալով առաքելոյ եռանդեան հետ՝ ազգային կրօնական դարձը կատարուեց. մեծին Տրդատայ ձեռնտուութիւնն էր՝ որ սուրբ Լուսաւորչու քարոզութեան հետ միատեղ՝ բոլոր չայաստանի դարձին գործակից եղաւ. հռոմէականը ազգի լուսաւորութեան և զարգացման դորձիքն է եղել միշտ, գործա-

վարը՝ ազգի յառաջաւորք, որոնք նոցա ջանից միշտ զուգընթաց լինելով, ազգը կերպարանափոխ արին ի կռապաշտութեանէ ի քրիստոնէութիւն, ի ազիտութենէ ի գիտութիւն, և ի խաւարէ ի լոյս. թարգմանիչք զործեցին, թագաւորը ուժով և կարողութեամբ զործակից եղաւ եկեղեցական դպրութեանը, ազգային գրականութիւնը միատեղ մշակելու. . . սուրբ գրոց լեզուով՝ Պօղոսը սերմանեց, Ապօղոսը ջուր տուաւ, Աստուած էլ այս մը տաւորական անդաստանի բեղմնաւորութիւնը տեսնելով՝ աձեցոյց։

Այսպէս ահա քրիստոնէական հաւատոյ Աստուածապաշտութեամբ զարդացած ազգը, ազգային գրականութեամբ ծաղկած ու յառաջացած ազգը, միանգամայն և ազգային յատկութիւններով աշխարհքին նախանձելի եղած Հայ ազգը իւր հայրենեաց մէջ, իւր ազգութեան կեդրոնին մէջ՝ թագաւորական Աթոռով, հոգեւորական իշխանութեան գաւազանաւ մէկ տեղ զօրացած, ականնք դարձեալ, թէ ի՞նչպէս ազգային պակասութեամբ (դու ասա անմիաբանութեամբ) իր թագաւորութիւնը ձգեց, հոգեւոր իշխանութիւնը բաժին բաժին արաւ. հայրենեաց մէջ ամբողջացած Հայ ազգը իր ազգութեան օրէն՝ ճղակոտոր եղած՝ աշխարհքէ աշխարհք, երկրէ երկիր ձգեց. ազիտութիւնն էլ հալածական հին թշնամին՝ մէկ կողմէն զէնքը ձեռին վրայ հասաւ, անմիաբանութիւնը որ ազգի և հայրենեաց վրայ էր ախրել, ազիտութիւնն էլ ամեն անհատի սրտի և հոգեւոյ մէջ թագաւորեց. և Հայաստանը այս երկու ազգային պակասութեամբ ամսցի դարձաւ։

Իսկ Հայ հայրենեաց բնաւորութեան մէջ ազգային յատկութիւնները անշիջանելի էր մինչ իսպառ. Նէմեան հրոյ պէս ազգային սիրոյ ջրհորին մէջ վտռ կմնար. հաւատոյ թշնամեաց հալածանքներէն՝ քրիստոնէական աստուածապաշտութեամբ աւելի զօրացան հայ ազգի հաստուածները. օտար ազգերի հաղորդակցութեամբ իրանց ուսումնասիրութեան եռանդովը բորբոքուեցան և օտար աշխարհք հայրենիք դարձրին. ազգաց լուսաւորութիւնը իրանց օրինակ առան, և օրինակովը իրենց ազգային յատկութեան մէջ վերստին փայլեցան. աստուածապաշտութեամբ որ ճշմարիտ քրիստոնեայ ճանաչուել էին, ուսումնասիրութեամբ էլ ճշմարիտ Հայ ազգ երևեցան. գիտութեան սիրոյ լոյսը որ իրենց ազգութեան հետ արեւելքէն տարել էին, հիմա արեւմուտքէն կծագեն հայրենեաց երկրագնդին վրայ և Հայաստանի մնացորդ ազգայնոց սիրտը և հոգին դէպ իրենց կքաշեն. Հայ ազգը ամեն աշխարհքէ բարոյական միութեամբ կմիանայ հիմա իրարու հետ. աշխարհքի հեռաւորութիւնը՝ ուսման սիրով և ազգային յառաջադիմութեան եռանդով միացած ազգը չի կարող իրարից բաժանել. — գիտութեամբ և յառաջադիմութեամբ ծաղկելու օրինակը ուրիշից առին, հիմա իրարու օրինակ կտան։

Մինչև ցայսօր Հայոց գաղթականները ամեն տեղ ազգային պակասութեանց վնասները լաւ ճանաչելով, հիմա ազգային յատկութեամբ կմիանան, և ազգային դպրոցներ ամեն տեղ կծաղկացնեն ի պարծանս Հայ ազգին. ազգի կարողութիւնը հոգեւոր իշխանութեան ջանից և վաստա-

կոց հետ միանալով, ընդհանրապես իտալացիությունն է զիտությունն ազգի դարձը կը կազմեն:

Վիտությունն ճանապարհը մտնելու, յառաջադիմությունն ասպարեզը ազգի ընդհանրությունն հետ միատեղ չափելու՝ ազգի ընդհանուրէն օրինակ պէտք է առնուի:—Ամեն ազգ իր լուսաւորությունն հնարքը իր մէջ պիտի որոնի:

ԱՐԷԼ. ԱՐԲԵՊԻՍԿՈՍՍ.

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԿՈՒ ԱՐԺԵՏՈՄՍ.

Նոր - Նախիջևանցի Մեծ. Պ. Վասպար Մարկոսեան Պօպովեան՝ 1864 և 66 թուականաց Ռուսական ներքին փոխառությունն վիճակարկությունն արժեւորմանէն՝ երկու հատ նուիրեց Մայր Աթոռոյս նորակառոյց Ճեմարանի:

Առաջնոյն թիւն է 40, և սեր. 4737, և երկրորդինն՝ թ. 31, և սեր. 1993:

Յիշեալ բարեպաշտ անձի նպատակը և եռանդը գովելով՝ հրապարակաւ շնորհակալութիւն կը մատուցանեմք նմին:

ԳՈՐԳԵՐ.

Արցախոյ վիճակին Առաջնորդ Վեր. Սարգիս Ս. Արքեպիսկոպոս Հ. Զաւալեանց՝ իւր ջանիւք ձեռք բերած ի պէտս մասանց նորաշէն խորանաց Մայր Աթոռոյս՝ երեքտասան հատ մեծ և փոքր դուրեր առաքեց այսր ի Ս. Լշմիածին, որոց

համար խորին շնորհակալութիւն՝ Նորին Սրբազնութեան:

Այս ունութիւ կարեւոր կհամարիմք ծանուցանել, զի ինչպէս Վեր. Վերդ Ս. Արքեպիսկոպոս Վահագնեանց՝ նոյնպէս վերոյիշեալ Սարգիս Ս. Արքեպիսկոպոս՝ աստի ի Մայր Աթոռոյս առժամանակեայ կերպիւ ստացած Ապիսկոպոսական զգեստները վերադարձուցին այսր՝ ըստ տնօրէնությունն Վահ. Հայրապետի՝ նորաշէն պահարանաց հնությունն թանգարանի մէջ որոշեալ բաժնում ի տես այցելուաց զետեղելոյ համար, որք հետ զհետէ խնամով պահուելով՝ երեւի հնությունն ի կարգ կգաստին. իսկ եթէ անխնայ գործածուին՝ անշուշտ չեմք կարող Մայր Տաճարը նոյնպիսեօք զարդարեալ և ճոխացեալ տեսնել, և եղածները գործածելով և հինցնելով՝ չզիանմք ո՞վ պիտի լեցնէ նոցա տեղերը, մինչդեռ եթէ ամենայն եպիսկոպոսունք՝ ըստ Ազգային - Լեկզ. հին սովորությունն՝ որք կարողութիւն ունենալով՝ ինքեանց սեպհական եպիսկոպոսական զգեստներ պատրաստեն, յայտնի բան է՝ զի Մայր տաճարին ճոխութիւնը կյաւելուն և ինքեանց յիշատակ կը թողուն:

ԵՐԵԲ ՀԱՐԻԻՐ ՌՈՒԲԼԻ.

Ախալքալաքցի Մեծ. Գրիգոր Տէր Արապիսեան երէ՛հ հարե՛ր ուրիշ նուիրեց ի նպատակ փառոյից նորակառոյց Ճեմարանի Մայր Աթոռոյս:

Հնորհակալութիւն կնուիրեմք յիշեալ բարեպաշտ անձին՝ գովելով իւր բարի նպատակը: